ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
«ՄԵԾԱՄՈՐԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

04407966
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
«ՄԵԾԱՄՈՐԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ
ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀՀ Արմավիրի մարզ 0910
ք. Մեծամոր 1 թաղ. 32-1/1
էլ-փոստ metsamor1@schools.am
Հեռ (+374)(0237) 3-35-71


թիվ 138

«19» 05 2025թ

ՀՀ Արմավիրի մարզպետարանի
գլխավոր քարտուղար
պարոն Ա.Հովհաննիսյանին

Հարգելի պարոն Հովհաննիսյան

Տեղեկացնում եմ, որ «Մեծամորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում առկա են «Ռուսաց լեզու» (6դ/ժ), «Ֆիզիկա» (12դ/ժ) և «Իմ հայրենիք» (4դ/ժ) առարկաների ուսուցչի թափուր ժամեր: Ուսուցչի թափուր տեղի համար մրցույթը կկայանա 2025 թվականի հունիսի 6-ին՝ ժամը 14:00-ին, Մեծամորի թիվ 1 հիմնական դպրոցում:

Կից ներկայացնում եմ ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի հայտարարության տեքստն ամբողջությամբ:

Առդիր՝ 1 էջ:

Տնօրեն՝ Ն. Գևորգյան

***Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Մեծամորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկայի (12 դասաժամ), ռուսաց լեզվի (6 դասաժամ) և իմ հայրենիք (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար***

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև հունիսի 3-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա ***2025թ. Հունիսի 6-ին՝ ժամը 14:00-ին***, Մեծամորի թիվ 1 հիմնական դպրոցում, հասցե՝ ք.Մեծամոր, 1-ին թաղամաս, 32-1/1: Տեղեկությունների համար զանգահարել (0237) 3-35-71 կամ 093522166 հեռախոսահամարով: